Ա.ՍԱՖԱՐՅԱՆ, Ա.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, Թուրքերենի դասագիրք. գիրք Առաջին, «Արտագերս» հրատ., Ե., 2001. 320 էջ:

Երևանի պետական համալսարանում մեծ հայագետ և արևելագետ Հրաչյա Աճառյանի անմիջական նախաձեռնությամբ, սկսած 1940-ական թվականներից դասավանդվում է թուրքերեն լեզուն: Տասնամյակներ շարունակ թուրքերենի դասավանդման համար օգտագործվել են առավելապես ռուսերեն, իսկ վերջին տարիներին նաև թուրքերեն տարաբնույթ դասագրքեր և ձեռնարկներ: Իսկ այժմ լույս է ընծայվել և ճիշտ ժամանակին՝ ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի վարիչ Ալեքսանդր Սաֆարյանի և նույն ամբիոնի դասախոս Աշոտ Սողոմոնյանի բազմամյա համագործակցության շնորհիվ ստեղծված «Թուրքերենի դասագիրքը», որը երաշխավորվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից՝ որպես դասագիրք բուհերի ուսանողների և թուրքերենը ուսումնասիրող այլ անձանց համար:

Գրախոսվող դասագիրքը կարևոր նշանակություն ունի հայ թուրքագիտության համար: Այն ունի զգալիորեն մշակված ու համակարգված կառուցվածք և ներառում է 15 դաս, որոնցից յուրաքանչյուրում ներկայացվում են տեղեկություն ժամանակակից թուրքերենի հնչյունական, քերականական, բառային համակարգերի մասին, վարժություններ, համապատասխան տեքստեր, առածներ և ասացվածքներ: Դասագիրքը ներառում է նաև թուրք բանաստեղծներ Յունուս Էմրեի, Զիյա Գյոքալպի, Ահմեթ Մուհիփ Դրանասի, Ջելալ Սահիրի բանաստեղծությունները: Այն կազմելիս հաշվի են առնվել հայ ուսանողներին թուրքերեն դասավանդելու առանձնահատկությունները:

Դասագրքին կցված է թուրքերեն-հայերեն լեզվաբանական գիտարառերի բառարան, շուրջ 5000 բառ ու բառակապակցություն ընդգրկող ուսումնական բառարան, ինչպես նաև արդի թուրքերենում առավել գործածական հապավումների բառարան: Հատկանշական է, որ երեք բառարանն էլ նորույթ են արևելահայ իրականության մեջ:

Դասագրքի ստեղծումը կարևորվում է թե գիտամանկավարժական, թե հասարակական ու գործնական տեսանկյուններից, ուստի զարմանալի չէ, որ դասագրքի հրատարակության առթիվ բազմաթիվ դրական գրախոսություններ արդեն իսկ տպագրվել են հայաստանյան և պոլսահայ մի շարք պարբերականներում (տե՛ս «Ժամանակ», 27.10.2001թ., «Երկիր», 05.12.2001թ., «Ազգ», 13.02.2002թ., "AGOS", 16.11.2001թ. և այլն):

Միաժամանակ, գրքի երկրորդ լրամշակված հրատարակությունը բարելավելու միտումով հեղինակներին կարող ենք անել հետևյալ դիտողությունները և առաջարկները.

1. Նպատակահարմար է դասագիրքը էլ ավելի հարստացնել թուրքական մամուլից ու գեղարվեստական գրականությունից վերցրած նոր տեքստերով:

2. Հարկ է ընդլայնել դասագրքին կցված ուսումնական բառարանի բառերի ու բառակապակցությունների քանակը մինչև 6000 - 6500-ը, ինչը զգալիորեն կընդլայնի բառարանի կիրառությունը:

3. Պետք է շտկվեն գրքում տեղ գտած առանձին տեխնիկական (հատկապես համակարգչային շարվածքի հետ կապված) վրիպակները:

4. Անհրաժեշտ է դասագիրքը վերահրատարակել առավել ընթեռնելի շարվածքով:

Պետք է դրվատանքի խոսք ասել դասագրքի հեղինակներ Ալ.Սաֆարյանին և Ա.Սոլոմոնյանին, ինչպես նաև խմբագիր, պրոֆեսոր Գառնիկ Աստրյանին և ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի դեկան ու ճանաչված բարեգործ Գուրգեն Մելիքյանին՝ «Թուրքերենի դասագրքի» ստեղծմանը մեծապես աջակցելու համար:

Դասագիրքը, հիրավի, կարող է զգալիորեն խթանել թուրքերեն լեզվի դասավանդման գործընթացը ՀՀ տարբեր բուհերում ու միջնակարգ հաստատություններում, ինչպես նաև օգտակար լինել թուրքերենն ինքնուրույն սովորողներին:

Ս.Կ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու